

ՊԵՏՐԻՍ ՄՈՃՈՒՅԵԱՆՑ

№ 10

ՉՈՐՍ ԱՌԱԿՆԵՐ

Ա. ՄԾՅԱՎՆ ՈՒ ԳՈՐՏԸ
Բ. ՄՐՁԻՒՆՆԵՐՆ ՈՒ ՄՈԽԱԿՆԵՐԸ
Գ. ԺԱՄԱԿՈՅՆ ՈՒ ՈՒԽԾԵՒՐԸ
Դ. ԿԱՅԼՆ ՈՒ ԱՂԻՔԸ

ԳՐԱԴԱՐԱՆ Հ 5 Կ Ո Պ.

391.99
Մ-87

Ա. Է Ֆ Ս Ա Ն Դ Ր Ո Պ Ո Լ
Տպարան Ա. Մ. Մալիկանեանցի

1914

891.99
5-87

6 NOV 2011

ՄՐ.

ԽԱՀԻ ԽԱՅԱՎԵՐԻ

ՊԵՏՐՈՍ ՄՈՃՈՒԵԱՆՑ

№ 10

(Գ14Վ)
28.

ՉՈՐՍ ԱՐԱԿՆԵՐ

3/266

ԳԻՆԻ կ 5 ԿՂՊ.

3597


10:

- Ա. ՄԱՐԱԼՆ ՈՒ ԳՈՐԾԸ
- Բ. ՄՐՁԻՒՆԵՐՆ ՈՒ ՄՈՒՍԱԿՆԵՐԸ
- Գ. ԺԱՄԱԿՈՉՆ ՈՒ ՈՒԽՏԱՌՈՐԸ
- Դ. ԳԱՑԼՆ ՈՒ ԱՋԻԿՆԵՐԸ



Ա Լ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ո Գ Օ Լ

Տպարան Ա. Մ. Մալիսանեանցի



I.

ՄԱՐՍԼՆ ՈՒ ԳՈՐՏԸ.

Արտապւած „Աղթիկուս ամսագրից.

Գետի ավին, ընկած մենակ,
Մի մարալ էր բառանչում.
Չուր էր ծըծում անկուշտ, անվերջ
Ու տընքալով հառաչում:

Վէրք էր ստացել էն մարալը
Զար որսորդի գընդակից,
Խոր էր վէրքը խեղճ մարալի
Յաւին չըկար ցաւակից:

Սակայն յանկարծ, այդ իսկ ժամին,
Մի գորտ կանգնեց գետափին
Ու հարցըրեց, անդուր ձայնով
Էն վիրաւոր մարալին.—

— «Ա՛, իմ մարալ, ինչու այդպէս
Խոր ես հեռւմ, հառաջում,
Ա՛խ ես քաշում դու անդադար
Ու անխընայ քեզ տանջում»:

— «Վէրք եմ ստացել, իմ բարեկամ,
Չար որսորդի գընդակից,
Վէրքըս խորն է, անբուժելի
Հանգիստ չունիմ իր ցաւից»:

— «Ա՛խ, չըգիտեմ ի՞նչ են ուզում
Չար մարդիկը մեղանից,
Նորից խօսեց տըգեղ, անդուր
Ճահճի արքան կարեկից—

«Որ շարունակ հալածում են
Քեզ պէս սիրուն մարալին,
Որ գիշեր զօր չարչարում են
Ինձ պէս չըբնաղ ջէլրանին»:

Այս խօսքերը երբ որ լըսեց
Վէրքից տանջւող մարալը,
Աւելի խոր հառաչ հանեց
Շարունակեց տընքալը:

— «Ո՞վ տըգեղ գորտ, նա բառանչեց —
Քո խօսքերը թիւնալի
Ինձ աւելի խոր խոցեցին,
Քան գընդակը որսորդի»...

Դու, խեղճ մարալ, ի՞նչպէս չայրւի
Հըպարտ սիրտըդ խոր ցաւից,
Ի՞նչպէս կըրնաս չըհառաչել
Սրտի խոցոտ խորքերից,

Երբ մեծամիտ, չընչին մի գորտ
Իր խօսքերով անհեթեթ,
Յանդըգնում է անմիտ կերպով
Հաւասարւել քեզի հետ...

II.

ՄՐՁԻՒՆՆԵՐՆ ՈՒ ՄՈՇԱԿՆԵՐԸ.

Չըմրան մի օր, կէս գիշերին,
 Մոծակների մի քարւան,
 Մեր ժըրաջան մըջիւնների
 Դուռ երթըկից ներս թափւան,
 — «Մեզ տեղ տըւէք, ու պահեցէք
 Եւ բան տըւէք ուտելու,
 Մենք եկել ենք ձեր տըներում
 Ողջ ձըմեռը կենալու»:
 Մեր ջանասէք մըրջիւնների
 Թէկ դուռը միշտ էր բաց,
 Բայց այս անգամ, նեղանալով
 Հարցըին նրանց զարմացած:
 — «Իսկ դուք ի՞նչպէս, ի՞նչ էք շինել
 Ողջ ամառը շարունակ,
 Որ գալիս էք բեռ դառնալու
 Այսպէս ձըմեռ ժամանակ»:

— «Պարապ չէինք, առիւծ արքան
 Մեզ կանչել էր իրան մօտ,
 Մենք երգեցինք, թըմրուկ զարկինք
 Ողջ ամառը նըրա մօտ»:
 Ճարը կըտրած մըրջիւնները
 Իրանց թիքէն կիսեցին,
 Զրիակեր մոծակներին
 Մինչև զարուն պահեցին»:

Եկան նաև երկրորդ տարին
 Մոծակները ձրիակեր,
 Այս անգամ էլ մըջիւնները
 Կերակրեցին ողջ ձըմեռ»:

Երրորդ տարին, ձըմրան մըտին
 Նորից եկան հիւրերը,
 Ու սկսեցին պինդ-պինդ թակել
 Մըջիւնների դըռները:
 Ոտքի ելան ամեն կողմից
 Տան տէրերը հիւրասէր,

Եւ վազեցին ու բաց արին
 Մեծ ու փոքր դարբասներ:
 Բայց ի՞նչ տեսնեն այն խեղճերը,
 Իրանց անկոչ հիւրերին,
 Որոնց նըրանք երկու ձըմեռ՝
 Իրանց տան մէջ պահեցին...
 Բայց այս անգամ մրջիւնները
 Ել չուզեցան լուռ մընալ,
 Ու աներես մոծակների
 Խըմճուկ գերին միշտ դառնալ.
 Ուստի նըրանք ձայն բարձրացրին
 — «Ո՞ւր էք գուլիս, մոծակներ,
 Մենք չենք կարող պահել ձեզ պէս
 Չար միջատներ ձրիակեր.
 Եւ մի՞թէ մենք պարտական ենք
 Միշտ կերակրել ձեզ ձըրի,
 Ու բըրտինքով վաստակածը
 Չեզ հետ հաւսար կէս անի»:
 — «Ի՞նչպէս ինչի, մի՞թէ չգիտէք—
 Մոծակները գոռացին,

Եւ ծանր ու մեծ, տան վերևում
 Առանց կանչել բազմեցին.
 «Մի՞թէ չգիտէք, որ առիւծը
 Մեր բոլորի տէր արքան,
 Ողջ աշխարհին արձակել է
 Մի նոր, ահեղ հըրաման,
 Որ մենք նըրա պալատներում
 Միշտ առանց վարձ պիտ երգենք,
 Իսկ դուք մեզի, առանց փողի,
 Ամեն ձըմեռ կերակրէք»...

Խեղճ մրջիւններ, դուք չէք մենակ
 Այդ փորձանքին ենթակայ,
 Կեանքն է այդպէս—մէկն աշխատի,
 Միուսն ուտէ ու խընդայ...

Առանց կանգնել, Մորայ վրայով
Մինչև Հարէշ հասնելու...

III.

ԺԱՄԱԿՈՉՆ ՈՒ ՈՒԽՏԱՒՈՐԸ.

I.

Օրւան մէկը, կեռ պոչ շունը
Իր տիրոջից նեղացած,
Մըտքում դըրեց տանից փախչել
Աղ ու հացը մոռացած:
Բայց արի տես՝ ընկեր գըտաւ
Մեր շատախօս աքլորին,
Դրին, վերցրին, խօսք մէկ արին,
Ճամբայ ընկան միասին:
Բայց թէ ի՞նչ էր արել տէրը
Էն չալ շանն ու աքլորին,
Ո՞չ հարցընող նըրանց եղաւ,
Ոչ էլ նըրանք պատժեցին:
Գիւղի կըշտին խորհուրդ արին,
Ու խօսք արւին իրարու

II.

Քրտինք մըտած աքլոր ու շուն
Սար ու ձորեր կըտրեցին,
Իրիկնաղէմ յոդնած, դաղրած՝
Մի վանքի մօտ կանգնեցին:
— «Է՞հ, հերիք է, խնամի աքլոր,
Խօսեց շունը բեղարած,
Օրի քընենք, որ վաղ զարթենք՝
Լուս ու մութը չըբացւած»:
— «Լաւ էս ասում, քեռի Բողար,
Էս օր արի շուտ քընինք,
Թէ որ այսպէս ճամբայ երթանք,
Վաղը Հալապ շուտ կանցնինք»:
Էս խօսքի հետ աքլորն ելաւ
Թառեց վանքի կըտուրին,
Շունն էլ մեկնեց չորս թաթերը՝
Վանքի դըռան մեծ քարին:

III.

Ճամբորդները աչքը ծէզին
 Գիշերն անցրին կիսաքուն,
 Լուսաղէմին արլորն ելաւ,
 Կանչեց իրա կուկուրիկուն:
 Որաեղից որտեղ, էդ չար ժամին
 Զէնը լըսեց մի աղւէս,
 Հասաւ վանքին ու տեսաւ
 Մեր արլորին սևերես:
 — «Բարի լոյս քեզ, խնամի արլոր,
 Աղւէսն սկսեց բըղաւել. —
 Խընդրեմ ցած եկ ու դուռը բայց
 Վանքում կուզեմ աղօթել»:
 — «Բարնվ եկար, քաւոր աղւէս,
 Աչքիս վերայ տեղ ունիս,
 Գալըդ բարի, առտուն կանուխ
 Էս հրդից ես դու գալիս:
 Բայց խընդրում եմ, դըռան կըշտին
 Մեր ժամկոչին տես, ասա,
 Որ ըշտապի ու քեզ համար՝
 Վանքի դոները շուտ բանալ».

IV.

Ուխտաւորը ուրախ-ուրախ
 Դէպի դուռը շիտկըւեց,
 Բայց երբ յանկարծ շանը տեսաւ,
 Ոտքերը տակը ծալւեց:
 Մեր Բողարն էլ տեղից թըռաւ
 Վըրայ հասաւ աղւէսին,
 Պոչից բըռնեց, բուրդը հանեց,
 Սև ուխտ բերեց իր գըլխին:
 Շունչը կըտրած, կաղին տալով
 Աղւէսն հազիւ աղատւած,
 Արագ-արագ վազվըզելով՝
 Ինքը իրան փընթփընթաց.
 — «Զէ, քանի էս վանքն էսպէս ժամկոչ
 իր դըռան մօտ կըպահի,
 Աստւած վըկայ, նա իր օրում
 Էլ ուխտաւոր չի տեսնի»...

Երբ այս խօսքերը խեղճ գայլը լըսեց
Եղւէսի վերայ մի լաւ ծիծաղեց.—
—«Բայց քեզ ինչ, քաւոր, չէ որ դու ուզտ չես,
Ուստի էլ ինչու հոգս կանես այդպէս»:

—«Ե՞ն, ինչ ես խօսում, գայլ աղնւափայլ,
Ո՞վ է հարցնողը թէ ինչ է ծառադ,
Մինչև հաստատեմ, թէ աղւէս եմ ես,
Ինձ հազար անգամ պայտած կըտիսնես»...



Մի օր շտապով ու հեքը կըտրած
Մի փոքրիկ աղւէս վազում էր սարից,
Որին երբ տեսաւ իր ծանօթ գայլը՝
Կանչեց բարձրածայն նրա յետեկից.—

—«Այ քաւոր աղւէս, այդ ուր ես վազում,
Մի դէպ ինձ նայիր, այ դու սեերես,
Մէկ բարով արա, կաց մի քիչ խօսինք,
Տեսնինք աշխարհից ինչ նոր լուր ունես»:

—«Ե՞նչ պիտի լինի, գայլ աղնւափայլ,
Միթէ չես լըսել մի նոր հըրաման,
Որ ողջ աշխարհի անմեղ ուզտերին՝
Ընխնայ կերպով պայտ պիտի խփեն»,



ՀՀ Ազգային գրադարան



NL0351314

ՄԵՐ ԾՊԱԳՐԱԾ ԱՅՆԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1.	Բանասահղծութիւններ	.	.	.	25
2.	Վշտի աղբիւրից (մեն. հրատ.)	.	.	.	5
3.	Տիզրոնի կալանաւորը	.	.	.	15
4.	Սրտի վէրքեր	.	.	.	10
5.	Մամիկոնեան առիւծը	.	.	.	30
6.	Հայրենի աւերակները	.	.	.	20
7.	Մոլլա Նասր-Էդղինի առակները	.	.	.	30
8.	Դալի Քէշիշի առակները	.	.	.	20
9.	Գայլը, աղւէսն ու էշը (առակ)	.	.	.	5
10.	Զորս առակներ	.	.	.	5

Վաճառւում է Թիֆլիսի և գաւառական քաղաքների գրավաճառանոցներում և Աղէքսանդրապոլ՝ հեղնակի մօտ:

44775

891.99

U-87